3 Հյուսիսային Ֆրանսիայի Amiens քաղաքի մոտ գտնվող Fresnoy au Val / Villers Bretonneux համայնքում 1878 թ. օգոստոսի 7-ին ծնված Հերմանսբուրգի միսիոներության աշխատակիցը նախ Բենեդիկտյան աբբայության ճեմարան է հաճախել Saint Riguier-ում, որից հետո բժշկական ուսումնառություն է ստացել Փարիզում և 1898 թ., լեզվախմբության իր տաղանդի շնորհիվ, դարձել ուսուցիչ «Բեռլին դպրոց»-ներից մեկում: 1899 թ. ամուսնացել է բողոքական մի կնոջ՝ Վերոնիկա Վազների հետ և Ստրասբուրգում ստանձնել «Բեռլին դպրոց»-ի մասնաճյուղի ղեկավարումը: Որոշ ժամանակ անց ստանձնել է նույն գործառույթը Metz ք. համապատասխան հաստատությունում: 1903 թ. կնոջ մահից հետո, 1994 թ. նա նորից ամուսնացել է բողոքական մեկ այլ կնոջ՝ Աննա Դրայստի հետ: Նրանց երեխաները մկրտվել են որպես ավետարանականներ: 1912 թ. հուլիսի 12-ին ինքը նույնպես ընդունել է ավետարանական-յուրթերական եկեղեցու դավանությունը: Դրանից կարճ ժամանակ անց Հերմանսբուրգի միսիոներությունը նրան աշխատանքի է հրավիրել՝ նպատակ ունենալով միսիոներ դարձնել քրդական առաքելության համար: 1913/1914-ին նա դրա համար բանասիրական և աստվածաբանական կրթություն է ստացել Գրոթինգենում, ի մասնավորի՝ Կարլ Ֆրիդրիխ Անդրեասի՝ առաջին հայի մոտ, ով պրոֆեսորի կոչում էր ստացել Գերմանիայում: Բախիմոնտն իսկապես արտակարգ լեզվական տաղանդ ուներ: Նա տիրապետում էր գերմաներենին, անգլերենին, ֆրանսերենին և իտալերենին, հասկանում էր ռուսերեն, թուրքերեն, հայերեն և, մասամբ չիներեն ընդլայնելով այս շրջանակն ավելի ուշ մասնագիտության բերումով՝ արաբերենով, պարսկերենով և քրդերենով՝ սովորելով մուկրի-քրդերի բարբառը: Tamcke, Bachimont, Georg Hippolyt, 118-120: Քրդերի հետ աշխատանքի մասին տես՝ Tamcke, Les documents d'archives, 25-51:

4 Harms, Hermannsburger Missionsblatt, 131:

5 Հատկապես նրա մասին՝ Groß, Missionare und Kolonisten:

6 Ջարենմբայի մասին՝ Ledderhose, Leben und Wirken u. von Zarembo, Ein russischer Edelmann als Missionar:

գերմանացիների անմիջական ապրումներին, որոնք քառսի և սովի էին մատնվել Հայաստանում՝ քաղաքական փոփոխությունների պատճառով: Ջորավար Անդրանիկ Օզանյանի շնորհիվ բոլոր հարձակումներից պաշտպանված հայաբնակ Արցախի պատկանելիությունը Հայաստանին դադարեցվում և խորհրդային իշխանությունների կողմից Ադրբեջանի շրջանին է բռնակցվում միայն 1921 թ.:<sup>7</sup> Ճիշտ այդ ժամանակահատվածում, չնայած խորհրդային իշխանության ներկայությունը և տվյալ տարածաշրջանում ուժերի դեռ չճշտված հարաբերակցության, տեղի է ունենում Բախիմոնտների ուղևորությունը:<sup>8</sup> Թե՛ իրենց անցկացրած ժամանակը Երևանում և թե՛ ընթացիկ ճամփորդությունները չափազանց կարճատև եղան իրավիճակի մասին հստակ սեփական պատկերացում կազմելու համար: Ճամփորդության ժամանակ նրանք իրենց հայ ուղեկիցների հույսին էին մնացել:

## 2. Մահվան ճանապարհորդություն

Բախիմոնտի առաջին առաքելությունը Պարսկաստան 1914 թ. հուլիսի 5-ին ավարտվել էր համաշխարհային պատերազմի սկսվելու պատճառով դեռ Կոստանդնուպոլսում: Պատերազմի ժամանակ Բախիմոնտը այնուհետև տարբեր գերիների ճամբարներում գործել էր որպես ռազմագերիների հոգևոր խնամատար: 1917 թ.-ին նա նորից մեկնում է Կոստանդնուպոլիս: Միևնույն ժամանակ նա արդեն իր ուղեբեռն այնտեղ էր թողել՝ քրդական տարածքներում ծրագրված գործունեությանն ավելի մոտենալու համար: Սակայն այս ճամփորդության փորձը նույնպես ապարդյուն անցավ:

Միայն 1920 թ. նա կարողանում է հասնել Երևան ու այնտեղ մնում մինչև Պարսկաստան մեկնելը: 1921 թ. մայիսի 21-ին, միսիոներական խումբը, որը երկար ժամանակով ակամա կանգ էր առել Թավրիզում, տեղափոխվում է Սավջբալազ (Մահաբադ) և անմիջապես անցնում ծառայության:<sup>9</sup>

Աշխատանքը կատարվում էր քաղաքում և դրա շրջակայքում՝ քաղաքականապես վատթարացող իրավիճակի գիտակցման մթնոլորտում: Առանց ասորիների և հայերի հետ համագործակցության՝ անհնար էր իրականացնել իրենց գործունեությունը: Այդ հանգամանքը սրում է հարաբերությունները քուրդ մեծամասնությունն ունեցող բնակչության, ինչպես և համագործակցությունը

7 Chalabian, General Andranik:

8 Ենթադրելի է, որ Բախիմոնտների արվիվային տվյալների հավելյալ ուսումնասիրությունը էլ ավելի կտարբերակի և կհստակեցնի սույն պատկերը:

9 Տե՛ս NLMP 8.4 (Hermannsburg, 20.10.1921), 6-7: Թիմի անդամները ստիպված էին մտածել չնախատեսված երկրորդ դպրոց հիմնելու մասին, քանի որ քաղաքում և շրջակայքում երեքից չորս հարյուր փախստական երեխաներ կային՝ Ուրմիայի տարածքից:

պարսկական կենտրոնական իշխանության պաշտոնյաների հետ:<sup>10</sup> Հայրենիքում պատասխանատուները տեղյակ էին տեղի քուրդ առաջնորդ Սիմկո Շիկակի դերակատարությանը:<sup>11</sup> Մա «յուրօրինակ քաղաքական դեր» էր խաղում,<sup>12</sup> քանի որ հայտնի էին նրա փոփոխվող դաշինքները ռուսների և անգլիացիների հետ, ինչպես նաև նրա հավանական համարվող դաշինքը թուրքերի հետ: Սիմկոն կարծես «ցանկանում էր Պարսկաստանից պոկել Քուրդիստանը»:<sup>13</sup> Բախիմոնտը հասնելով Թավրիզ՝ մանրամասն տեղեկացվում է վտանգավոր իրադարձություններին: Թավրիզում եվրոպական տերությունների հյուպատոսական ներկայացուցիչները համառորեն նախազգուշացնում էին նրան Սավջբալազ տեղափոխվելուց:<sup>14</sup> Անգլիայի հյուպատոսը նույնիսկ հայտարարում է, որ կարգելեր նրան ընդհանրապես այնտեղ մեկնել, եթե դրա լիազորությունն ունենար: Բախիմոնտը մերժում է այդ առաջարկը:<sup>15</sup>

Սեպտեմբերի վերջին Բախիմոնտը կանխակալում էր Սիմկոյի հարձակումը Սավջբալազի վրա:<sup>16</sup> Փախուստն այլևս հնարավոր չէր ձիերի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով: Հոկտեմբերի 6-ի կեսօրին քրդական զորքը գրավում է մոտակա լեռները: Գիշերը Բախիմոնտները լսում են «զնդացիների ու թնդանոթների կրակոցներ»:<sup>17</sup> Ժանդարմերիայի զումարտակը քաղաքում դիմադրություն է ցույց տալիս, սակայն հետո հանձնվում է: Թալանչի քրդերը հասնում են միսիոներական տեղանք և կողոպտում նրանց տները: «Այն դաժան վերաբերմունքը, որին մենք արժանացանք, անհնարին է նկարագրել: Մեզ հրացաններով հրում էին, հարվածում և քաշում մեր մազերից»,<sup>18</sup> - նկարագրում էր միսիոնար քույրերից մեկը: Ի մասնավորի տուժել էր տիկին Բախիմոնտը. «Մարմինս հարվածներից սևացել էր»:<sup>19</sup>

Դեկտեմբերի վերջին նա գրում է, որ «ներքին ցավերը» դեռ չէին անցել: Թալանչիների զնալուց հետո զինված մի խումբ կրկին հանդիպեց Բախիմոնտների ամուսնազույգին.

10 Stü Tamcke, Die deutschen Kurdenmissionen in Mahabad, 190; Tamcke Martin, Zwischen kurdischem Nationalismus, 595-604; Tamcke, Deutsche Missionare unter kurdischen Muslimen, 307-322:

11 Stü NLMP 9.1 (Hermannsburg, 20.2.1922), 1; նրա ճանապարհը նաև հետագայում միսիոներական առաքելության Սավջբալազից դուրս բերումից և Բախիմոնտի սպանությունից հետո, դիտարկվում է միսիոներական ընկերության կողմից, տես NLMP 9.2 (Hermannsburg, 15.5.1922), 3; NLMP 9.3 (Hermannsburg, 25.7.1922), 2-4:

12 NLMP 9.1 (Hermannsburg, 20.2.1922), 1:

13 Նույնը:

14 Stü նույնը, 1-2:

15 Նույնը:

16 Դեռևս 1921 թ. սեպտեմբերի վերջին/հոկտեմբերի սկզբին գերմանա-ամերիկյան քույրերից մեկը այն կարծիքին էր, որ Սիմկոն չի դիմակայելու պարսկական կառավարական զորքերին Սավջբալազի մոտ, այլ հավանաբար ընդհարման է գնալու Ուրմիա լճի հարավ-արևմտյան ծայրում՝ Սուլդուսի շրջանում, NLMP 9.1 (Hermannsburg, 20.2.1922), 2:

17 Նույնը:

18 Նույնը, 3:

19 Նույնը:



«Տիկին Բախիմոնտը տեսավ, թե ինչպես էր ամուսինն իջնում աստիճաններով՝ երեք տղամարդու ուղեկցությամբ, և կարծում էր, որ դրանք թուրք սպաներ էին: Նա գունատ էր և նկատվում էր, որ հետն ինչ-որ վատ բան է կատարվել: Նրանց հարցին այլևս չէր կարող պատասխանել. նա ընկավ գետնին, նորից կանգնեց և դարձավ կնոջ կողմը: Սրտի մոտ գտնվող վերքից արյուն հոսեց, և հինգ րոպե անց նա ննջեց»:<sup>20</sup>

Ըստ մի հայ ականատեսի՝ երեք տղամարդկանցից մեկը թիկունքից կրակել էր Բախիմոնտի մեջքին:<sup>21</sup> Ամերիկացի երեք միսիոնար քույրերը, գտան նույնպես զնդակահարված հայ դռնապանին, որը դեռևս հոգեվարքի մեջ էր, ու փորձեցին ապաստարան փնտրել: Նրանք փախան քաղաքում գտնվող քուրդ ձիավորների միջով, ոտաբոքիկ դեգերելով՝ գետով բարձրացան զառիթափ բլուրը, որտեղից Սիմկոն անձամբ հետևում էր իրադարձություններին:

Սիմկոն նրանց իսկապես հայտնեց «իր ափսոսանքը կատարվածի համար և մի սպա ուղարկեց կանանց ապահով տեղ հասցնելու համար: Նա բերեց նրանց պարսիկ մաքսավորի տունը, որը փախուստի էր դիմել»: Տիկին Բախիմոնտը թալանչիներից պատասպարվել էր նախ դռնապանի տանը, իսկ նրա սպանությունից հետո թաքնվել միսիոներական տեղանքի ետևում գտնվող խարխուլ մի տան մեջ: Այնտեղ նա ֆիզիկական բռնության և հոգեկան տվայտանքների պատճառով ուժասպառ էր եղել ու այլևս ի վիճակի չէր նորից կանգնելու, մինչև որ նրան հայ դռնապանի այրին, գտնելով և մեջքի վրա կրելով, տանում է իրենց տուն: Այստեղ նրան կրկին հանդիպում են վերոնշյալ երեք ամերիկացի քույրերը: Երկու քույրերն երկու արկղերից ժամանակավոր մի դագաղ են պատրաստում սպանված Բախիմոնտի համար, որը, դնելով սանդուղքների վրա, տեղափոխել են տալիս ավերված հայկական եկեղեցու բակը: Հոկտեմբերի 9-ին հանգուցյալը հուղարկավորվում է 1907 թ. նույնպես սպանված, Արևելքի գերմանական առաքելության (Deutsche Orient-Mission) երիտասարդ սեմիտագետ Էմանուել Դամմաննի շիրիմի կողքին: Մինչ մյուս գերծընկերները Պարսկաստանում են մնում, Աննա Բախիմոնտը միայնակ, գերհոգնած և հոգեմաշ բռնում է վերադարձի ճանապարհը: Նույնիսկ շատ կարճ տարածություն կտրելիս, նրա մոտ «ցավեր ու գլխապտույտ էին սկսվում»:<sup>22</sup> Ծանապարհորդությունը Ռուսաստանով անհնար էր, քանի որ բոլշևիկյան իշխանությունը Ֆրանսիայի կողմից չէր ճանաչվել, և ֆրանսիական հյուպատոսն այդ իսկ պատճառով հրաժարվել էր նրան ճամփորդության արտոնագիր տրամադրել:

20 Նույնը, տե՛ս նաև Lyko, Gründung, Wachstum und Leben, 13; Richter, Mission and Evangelism in the Orient, 209:

21 Տե՛ս NLMP 9, Nr. 1 (Hermannsburg, 20.2.1922), 1-4 և NLMP 9, Nr. 1 (Hermannsburg, 25.7.1922), 1-8: Տե՛ս առանց հեղ. տվյալների, Bericht über die Hermannsburger Mission, 35: Գեորգ Հիպոլիտ Բախիմոնտի և նրա մահվան մասին տե՛ս, ի թիվս այլոց՝ առանց հեղ. տվյալների, Georg Bachimont, ein Märtyrer für die Kurdenmission (1921), 95-96; Evangelisch-lutherischer Friedensbote (1921), 361; Röbbelen, Lebensbild des ersten Missionars, 42-47; Röbbelen, Funeral report from Persia, 331: Սիմկոնի ապաստանության քաղաքական պատճառների մասին, տե՛ս Brentjes, Kurdish Tribes and the State in Iran, 364-400: Ամբողջական պատկերի վերաբերյալ տե՛ս Tamcke, Die deutschen Kurdenmissionen, 254-257:

22 NLMP 9, Nr. 3 (Hermannsburg, 25.7.1922), 3:

Մի պահ թվում էր, թե նա պետք է ճանապարհորդեր Բաղրադով և Բոմբեյով: Բայց մարտի 15-ին նա վերջապես հնարավորություն է ստանում վերադարձի ճամփա բռնել Հայաստանով, այն բանից հետո, երբ պատամբների և Թավրիզում պարսկական կենտրոնական իշխանության միջև բռնկված մարտերի ընթացքում հրացանի երկու փամփուշտ նրա ննջասենյակի պատի մեջ են մխրձվում:<sup>23</sup> Երևանը հերթական անգամ նրա համար ագրեսիայի թատերաբեմ դարձավ.

«19-ին նա ուշ երեկոյան հասնում է Երիվան: Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի պաշտոնյաները կառք են ուղարկում քաղաքից հեռու գտնվող գնացքի կայարան, տիկին Բախիմոնտին դիմավորելու: Սակայն երկաթուղային կայարանից դուրս գալուն պես այն կանգնեցնում են զինված ավազակները, անպաշտպան կնոջից հափշտակում նրա գումարը և ուղեբեռը: Նաև ամուսնու արժեքավոր գործերը մասամբ ընկնում են ավազակների ձեռքը: Տիկին Բախիմոնտը կրկին հինգ շաբաթ կանգ է առնում Երիվանում: Վերջապես նա կարողանում է հայրենիք վերադառնալ առանց հերթական պատահարի և Ստրասբուրգ է ժամանում մայիսի 24-ին՝ Համբարձման տոնի օրը»:<sup>24</sup>

Օտտո Բախիմոնտը՝ Գեորգի որդին, պայքարում է հոր աշխատանքը շարունակելու հնարավորության համար: Ապարդյուն: Իսկ Աննա Բախիմոնտն ամուսնուն հաջորդող միսիոնարի միջոցով Գեորգի մարմինը հուղարկավորել է տալիս լեռներում գտնվող գաղտնի մի վայրում, քանի որ մահմեդական բնակչությունը հայկական զերեզմանոցն օգտագործում էր որպես արտաքնոց: Այսպիսով՝ այս դրվագը ավարտվում է հաջորդող իրադարձությունների հոլովությամբ՝ բառի բուն իմաստով՝ անհասանելիի հորձանուտում:

### 3. Հայաստանում

Իրադարձությունների այս մեծ հաջորդականության մեջ իր տեղն է գրավում Հայաստանում 1920-1921 թթ. ընկած ժամանակահատվածը: 1920 թ. հուլիսի 20-ին Գեորգ Բախիմոնտը կնոջ հետ հասնում է Երևան:<sup>25</sup> Ինչպես որ գերմանական

23 Թավրիզի համար մղվող մարտերի պարագայում խոսքը գնում էր իրանական կառավարական զորքերի և քուրդ առաջնորդ Լահուտի Խանի հակամարտության մասին: Տե՛ս NLMP 9, Nr. 3 (Hermannsburg, 25.7.1922), 4:

24 Առանց հեղ. տվյալների, Bericht über die Hermannsbürger Mission, 35; NLMP 9, Nr. 3 (Hermannsburg, 25.7.1922), 3-4:

25 Տե՛ս NLMP 7, Nr. 3/4 (Hermannsburg, 20.9.1920), 5; Ռյոբելենը, ով որպես Պարսկաստանում լյութերական առաքելությունների կազմակերպության նախագահ, պատասխանատու էր նրանց մեկնելու համար, երկար ժամանակ առաջ մեկնման մասին հայտնել էր գերմանական միսիոնարական ընկերության Արևելքի և Իսլամի հանձնաժողովին: Տե՛ս Ռյոբելենի 1920 թ. ապրիլի 3-ի նամակը Դոկտ. Աքսենֆելդին և Արևելքի ու Իսլամի հանձնաժողովին, որտեղ նա ներողություն է խնդրում հանձնաժողովի բանակցությունների համար հիվանդության պատճառով: Ինչպես սույն նամակը, այնպես էլ 1920 թ. ապրիլի 9-ի հանդիպման

միսիոներական ընկերությունն ամերիկյան կողմի հետ պայմանավորվել էր, Բախիմոնտն աշխատանք է ստանում Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեում:<sup>26</sup> Այդ ժամանակահատվածից Հայաստանում Հերմանսբուրգի արխիվում և Հալլեի Լեփսիուսի արխիվում միայն մի քանի նամակներ են պահպանվել: Նամակներից շատերը Հայաստանի և Վրաստանի միջև փոստային կապի դադարեցման պատճառով այսօր կորած են համարվում:<sup>27</sup>

Հայաստանի մայրաքաղաքում տիրող իրավիճակի մասին Բախիմոնտի գերիշխող տպավորությունը հետևալն էր. «մեծագույն կարիք»:<sup>28</sup> Այն տիրում էր ողջ Հայաստանի Հանրապետությունում. «Կիսատված, հաճախ կմախքացած կերպարներ՝ ծածկված լաթերով»:<sup>29</sup> Թշվառությունը նրանց մոտ ամենուր էր:

Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեն աշխատում էր հենց այս կարիքը վերացնելու համար: Բախիմոնտը հստակ կերպով հասկանում էր իրենց աշխատանքի կարևորությունը «այսքան ծանր աղետահար եղած հայերի» համար,<sup>30</sup> ի հեճուկս քաղաքական ողջ լարվածության:

«Որչափ աննկարագրելի էր հայերի երախտագիտությունն ամերիկացիների հանդեպ: Ամերիկյան կերակրեց բնակչությանը մի ամբողջ ժամանակահատված և կշարունակի 20-25 տարի ևս Վանի շրջանի 30.000 որբերին խնամել»:<sup>31</sup>

Խիստ կարիքավորները, հիվանդներն ու որբերը դարձել էին օգնության ծրագրերի շահառուները:

Գերմանացիների հետ համագործակցող ամերիկացի Ֆոստունը բնակվում էր հենց ամերիկյան օգնության կոմիտեի շենքում:<sup>32</sup> Ամերիկյան միությունը հոգ էր տանում, որ նրանք «սնունդը մատչելի գներով գնել կարողանային»:<sup>33</sup> Սննդի գները սարսափելի բարձր էին: Մեկ ֆունտ հացը 200 ռուբլի արժեր, բայց Բախիմոնտներն ամերիկյան օգնության կոմիտեի միջոցով այն 100 ռուբլով էին գնում: Գերմանիայից Հայաստան փոստային կապն այնքան վատ էր, որ միսիոներության աշխատակիցների համար նախատեսված գումարը ժամանակին տեղ չէր հասնում: Միսիոներության աշխատակիցներն այդպիսով «լուրջ հոգսերի»<sup>34</sup> մեջ էին հայտնվում: Ամերիկացի

---

բանակցությունների արձանագրությունը գտնվում են Հերմանսբուրգի ավետարանական-յուրօրերական առաքելության արխիվի Հայաստան (Armenien) թղթապանակում:

26 Նույնը:

27 Stü Tamcke, Die Archivalien der deutschen Kurdenmissionen, 417-426; Tamcke, Les documents d'archives de la mission allemande au Kurdistan, 25-51:

28 NLMP 8, Nr. 1 (Hermannsburg, 1.2.1921), 2:

29 Նույնը:

30 Նույնը:

31 Նկատի ունի Վանն այսօրվա արևելյան Թուրքիայի տարածքում:

32 Stü NLMP 8, Nr. 1 (Hermannsburg, 1.2.1921), 2:

33 Նույնը:

34 Նույնը:

միսիոներների ծանրաբեռնվածությունը հանգեցնում էր գերմանացի նորեկների լիակատար մեկուսացման, ինչը վերջիններս շատ ծանր էին տանում: Բախիմոնտ ամուսնազույգը բոլորովին իրենք իրենց հուշին էին մնացել:

Օգոստոսին Ֆոստունը համոզում է Բախիմոնտին իր հետ արշավել դեպի Արարատ լեռ: Նպատակն Արարատ լեռը մազլցելն էր: Երկուսն էլ սկզբում ձիավարում են միայն մինչև փոքրիկ Արարատ: Այնտեղ ճամփորդությունն ավարտվում է, քանի որ թափառաշրջող քրդերը «լուրջ վտանգ»<sup>35</sup> էին ներկայացնում: Երևան վերադարձի ճանապարհին նրանք հասկանում են, որ քրդերը մտադրվել էին սպանել իրենց, որովհետև Բախիմոնտին նրանք հայի տեղ էին դրել: Մահավտանգվածը կարողանում է փրկվել միայն ձիով հապճեպ փախուստով՝ քսան ժամ թամբի վրա նստած: Նրանք գիշերը դիտմամբ շեղվում են հիմնական ճանապարհից, ապա կտրում Արաքսը՝ Հայաստանի մայրաքաղաք վերադառնալու համար: Բախիմոնտի կարծիքն իրեն պարտադրված այդ ձեռնարկման մասին միանշանակ էր: Այս «de cette entreprise folle»<sup>36</sup> (Ֆրանս. «այս տխմար ձեռնարկի») արդյունքը, պատերազմի և ցեղային թշնամությունների ժամանակ վտանգված տարածք թափանցելը լավագույն պարագայում քոչվոր քրդերի հետ ծանոթությունն էր:<sup>37</sup> Գեորգը նրանց համարում էր «մարդասպանների ավազակախումբ»,<sup>38</sup> հաճախ՝ մի քանի անգամ մահապատժի դատապարտված քոչվորներ: Մի քիչ տարօրինակ էր թվում, որ Բախիմոնտը հետագայում ինքն է այդ քրդերին հորդորել իրենց երեխաներին իր իսկ միսիոներական դպրոց ուղարկել: Ֆոստունը մի փոքր ուշ միայնակ կրկնեց այս արշավն ու բարձրացավ Արարատ լեռը: Դա նրա վերջին ֆիզիկական ձեռքբերումն էր: Նա ստիպված էր հրաժարվել Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության իր պարտականություններից: Հոկտեմբերի 6-ին նրա մոտ անկանխատեսելի նյարդային խանգարումներ սկսվեցին: Կատաղի ջղաձգություններից ցնցված՝ նա վերջնականապես ուժասպառվում է թվով 16-րդ ներվային ցնցումից հետո: Հոկտեմբերի 10-ին, չորս օր տևող հիվանդությունից հետո նա մահանում է 41 տարեկան հասակում:<sup>39</sup>

Նրա մահից հետո Բախիմոնտը ոչ միայն դառնում է տեղի միսիոներական խմբի ղեկավար, այլև Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի կողմից նշանակվում Երևանի միսիոներական դպրոցների տեսուչ և ստանում նոր դպրոցներ հիմնելու առաջադրանք:<sup>40</sup> Ամերիկայից մեկ այլ՝ բժշկական կրթություն

35 Նույնը:

36 Նույնը:

37 Տե՛ս NLMP 8, Nr. 1 (Hermannsburg, 1.2.1921), 3:

38 Նույնը:

39 Իմ բրիտանացի-ամերիկացի գործընկեր Քոբլեյն ու Էս առ այժմ չենք կարողացել գտնել Ամերիկայում Ֆոստունի արխիվային ժառանգությունը: Տեղեկատվություն Բախիմոնտի մահվան մասին NLMP 8, Nr. 1 (Hermannsburg, 1.2.1921), 3:

40 Տե՛ս նույնը: այստեղ նշված գերմանա-ամերիկյան պատերազմից հետո Բեքերի առաքվելու լուրը, չնայած հաջող նախնական բանակցություններ և մասնագիտական համապատասխանության, չի իրագործվում:

ստացած միսիոներ քույր, Օզյուստ Գուդհարթը, միանում է իրենց խմբին: Այսուհետև Բախիմոնտի խմբի մեջ էին իր կինը և երեք գերմանո-ամերիկյան միսիոներ քույրերը:<sup>41</sup>

Բախիմոնտին իր նոր պաշտոնը բարձր հեղինակություն է բերում: Նրան հանձնարարված ճորտացների հիմնումը ծառայում է որպես նախապատրաստություն, հետագայում պարսկական միսիոներական տարածքում այլ ճորտացներ ստեղծելու համար: Սակայն այդ աշխատանքը պետք է իրականացվեր համապատասխան հրահանգով: Ամերիկացիները բոլշևիկյան նոր կառավարության պատճառով ծրագրում էին աշխատանքի լիարժեք տեղափոխում:<sup>42</sup> Այդ իսկ պատճառով, այն ամենը, ինչ Բախիմոնտը կամենում էր անել, մշտապես հղի էր անորոշությանը, կախված նրանից՝ թե որքան ժամանակ Մերձավոր Արևելքում օգնության կոմիտեն ի վիճակի կլիներ նրան ֆինանսավորելու որպես աշխատակից Հայաստանում:

Միաժամանակ, միսիոներական ընկերության գերմանացի պատասխանատուները մնում էին առանց հստակ լուրերի Հայաստանից: Նրանք թեև տեղեկացել էին, որ բոլշևիկները Հայաստանում իրենց ձեռքն են վերցրել իշխանությունը, բայց և այնպես կարող էին միայն կռահել, որ ամերիկացիները, և նրանց հետ միասին առաքելության անդամները, հավանաբար արդեն լքել էին Երևանը: Դեռևս հոկտեմբերին Բախիմոնտը մտածում էր Հայաստանից դեպի Թավրիզ ստուգողական արշավ ձեռնարկելու մասին: Այդ գաղափարը մնաց անկատար:

Թիֆլիսով կապը Գերմանիայի հետ վերջնականապես խզվել էր: Բախիմոնտը զրեթե չուներ միջոցներ՝ կարիքները բավարարելու համար: Այդուհանդերձ, նա անդադար լուծումներ էր փնտրում: Ամռան վերջին Բախիմոնտն այսպես հարցնում է Ռյոբելենին ևս ու նրա միջոցով նաև Արևելքի գերմանական առաքելությանն ու Լեփսիոսին՝ արդյոք գերմանական համալսարանները ի վիճակի չեն Երևանում նոր հիմնվող համալսարանին դեղորայքային հավաքածու նվիրաբերել: Միսիոներական առաքելությունները միակ հաստատություններն էին, որոնցից նա կարող էր հետաքրքրություն սպասել հայերի ճակատագրի վերաբերյալ: Նա խնդրում էր, որ հայ ուսանողներին Գերմանիայում կրթվելու համար հեշտացնող պայմաններ տրամադրվեն:<sup>43</sup> Քաղաքացիական պատերազմի իրավիճակում գտնվող երկրում, նա հնարավորություն չէր տեսնում սեփական ուժերով անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու: Սակայն Գերմանիայի արևելքի միսիոներությունը պարզապես հայտնում է նրան. «Մենք էրիվանի հետ (այլևս) կապ չունենք»:<sup>44</sup>

41 Ալմա Ֆոսումը, Օզյուստ Գուդհարթն ու Հաննա Շոնհուդը:

42 Տեն NLMP 8, Nr. 1 (Hermannsburg, 1.2.1921), 4:

43 Տեն Կարլ Ռյոբելենի 1920 թ. նոյեմբերի 29-ի նամակը Յոհաննես Լեփսիոսին: Խմբագրված միկրոֆիլմը՝ Goltz/Meissner, Deutschland, Armenien und die Türkei, Մաս Բ, Microfiche Edition, NC 2129; թվարկված՝ Goltz/Meissner, Deutschland, Armenien und die Türkei, Մաս Ա, Katalog, 243:

44 Արևելքի գերմանական առաքելության 1920 թ. դեկտեմբերի 19-ի գրությունը Պոտոսդամից Ռյոբելենին տեղի Հերմանսբուրգի ավետարանական-լյութերական առաքելության արխիվի՝ Բախիմոնտ (Bachimont) թղթապանակում:

Որպես հիմնավորում մատնանշվում է՝ քաղաքական փոփոխությունները և Հայաստանի Խորհրդային Հանրապետության ստեղծումը: Ավելի քան երեք ամիս Բախինոնտի նամակագրական կապը Գերմանիայի հետ ոչ մի արդյունք չի բերում: Նրա՝ այն ժամանակվա նամակները երբեք չեն հասնում իրենց նպատակին:

Ռյոբելեն միսիոներական ամսագրում իր ընթերցողներին փոխանցում է.

«Հայաստանում ինչ-որ բան է տեղի ունեցել, որ նման էր հեղափոխության, և բոլշևիկյան կառավարություն է կազմավորվել: Այն հակամարտության մեջ է մտել Վրաստանի հետ: Թե այս պատճառով, և կամ էլ այլ պատճառներով, ամեն դեպքում էրիվամի և Թիֆլիսի միջև կապը խզվեց»:<sup>45</sup>

Մինչ Հերմանսբուրգի արևելքի միսիոներության էլզասցի ընկերները դեռ հաջորդ տարում անթաքույց գրում էին, թե Բախինոնտներն ի վերջո իրենց ճանապարհը կարող են «բոլշևիկներիօգնությամբ»<sup>46</sup> շարունակել, Հերմանսբուրգի զեկույցներում այս հատվածը հրապարակման պահին պարզապես ջնջվում է:<sup>47</sup> Այդ ընթացքում սովետները միսիոներական խմբին դեպի Պարսկաստան անկանոն զնացող զնացքների մեջ նույնիսկ առանձին երկաթուղային վագոն են տրամադրում:<sup>48</sup> Մեկնումը հապճեպ է տեղի ունենում: 1921 թ. հունվարի 6-ին նրանց հրամայվում է մեկնել նույն օրը երեկոյան: Սակայն զնացքը չշարժվեց, և վագոնը դարձավ նրանց բնակավայրը: Բախինոնտի անձնակազմին միացած մի հայ առաջին ցրտաշունչ զիշերվանից հետո անհրաժեշտ քանակությամբ վառելիքայտ է հայթայթում:<sup>49</sup> Միայն այն փաստը, որ նրանց, իբրև օտարերկրացիների, այդ թշվառության մեջ նման պարագաներ են տրամադրվել, վկայում էր իրենց արտոնյալ վիճակի մասին:

Վերջապես, հունվարի 8-ին՝ զիշերը ժամը 3-ին, զնացքը մեկնեց մինչև Նախիջևան, որտեղ նրանք ժամանեցին երեկոյան, ժամը 20-ին: Բայց այն դարձյալ կանգ առավ: Ճանապարհի միայն երեք քառորդն էին անցել՝ մինչև հայ-պարսկական սահմանային Ջուլֆա կայանը: Սովորաբար այդ ճանապարհորդությունը կարող էր կատարվել վեց ժամում: Կրկին Բախինոնտները թույլտվություն

45 NLMP 8, Nr. 2 (Hermannsburg, 15.5.1921), 2:

46 Evangelisch-lutherischer Friedensbote (1921), 361: Թերթի խմբագրությունը Կարլ Մաուրեր պատրոի ձեռքում էր՝ Հերմանսբուրգի Պարսկաստանի առաքելության ղեկավարության առաջատար աստվածաբան: Սա պատասխանատուներից միակն էր, ով գիտեր սիրիերենը և Առաջին համաշխարհային պատերազմից առաջ այցելություն էր կատարել պարսկական Ուրմիայի շրջանի Հերմանսբուրգյան համայնքները: Սա վճռականորեն քաջալերում էր հերմանսբուրգցիների աշխատանքի ընդլայնումը՝ քրդական առաքելության ուղղությամբ:

47 Թերթի տվյալ հատվածը տե՛ս Հերմանսբուրգի ավետարանական-յուրթերական առաքելության արխիվի Բախինոնտի անձնական գործում:

48 Տե՛ս NLMP 8, Nr. 2 (Hermannsburg, 15.5.1921), 2-4:

49 Տե՛ս նույնը, 2-3: «Քանի որ մեր ընկերները պետք է համակերպվեին երկաթուղային վագոնում ավելի երկար մնալուն, նրանց հայ ուղեկից՝ Ջեհանյանը, որին իրենց հետ ճանապարհ էին վերցրել, փայտի մեծ պաշար բերեց էրիվանից: Այսպիսով, նրանք երկրորդ զիշերն իրենց վագոնում ավելի քիչ տանջվեցին ցրտից, քան առաջինի ընթացքում»:

ստացան «երկաթուղային վագոնը որպես բնակարան [օգտագործելու] մինչև ճանապարհորդության շարունակվելը»:<sup>50</sup> Ճանապարհորդությունը շարունակել չկարողանալու պատճառը. «Ջուլֆա ժամանակավորապես հնարավոր չէր մեկնել լոկոմոտիվ չլինելու պատճառով»:<sup>51</sup>

Գնացքը, որով նրանք եկել էին, վերադարձավ Երևան, բացառությամբ այն վագոնի, որն իրենց էր տրամադրվել: Հետադարձ գնացքն այնպես անհույս կերպով էր գերլցված, «որ մոտ 100 լաթերով փաթաթված մարդ վագոնների տանիքներին էին պռակել և այդպես ձմեռային սարսափելի ցրտին ճամփորդում էին»:<sup>52</sup> Առանց այդ էլ Բախիմոնտները սարսափելի տեսարանների ակնատես էին դառնում: Այսպես նրանք տեսնում էին զրեթե մերկ երեխաների, որոնք «ոտաբոբիկ կանգնած էին ձյան մեջ»:<sup>53</sup> Սրանց պատմել էին, որ «հաճախ վագոնները, սովյալ և ցրտահարված մարդկանցով լի էին շարժվում, և որ տարածքի 48 գյուղեր այլևս զոյություն չունեին, նրանց բնակիչները [...] մասամբ սպանվել, մասամբ էլ փախուստի էին դիմել»:<sup>54</sup> Բախիմոնտները տեղեկացնում են կրկին ու կրկին հայերի անհավատալի ճգնաժամի մասին և դրանից պարզ է դառնում, որ նրանց միայն առօրյա համակեցության պատկերն էր ներկայանում և իրենք չէին կարող պատճառաբացատրական կապեր որոնել, այլ ի վիճակի էին միայն ուղղակի շարադրել իրենց վերապրած տպավորությունները:<sup>55</sup>

Երբեմն այս թշվառությունը չափազանց մոտենում էր երկու ճանապարհորդներին: «Երկաթուղային վագոնի մոտ, որում ապրում էին Բախիմոնտները, մի օր թափառող շների կողմից ձյան միջից փորվում-հանվում են կմախքներ և դիակներ»:<sup>56</sup>

Բախիմոնտը վայելում էր պարսից հյուպատոսի և տեղի բուլճակի կառավարչի բարեհաճությունը, քանի որ «ուսուցչի մասնագիտության պատճառով ճանաչվել էր որպես աշխատավոր՝ ստանալով հացի կտրոններ»:<sup>57</sup>

Հյուպատոսն «ուրախ էր ինչ-որ մի բան անել նման մարդու համար, որ Եվրոպայից Պարսկաստան էր ճամփորդում՝ այնտեղ դպրոց հիմնելու համար: Հյուպատոսը ծանոթ էր միսիոներական դպրոցների բարեբեր օրհնությանը, որովհետև նրա զարմիկները նման դպրոցում էին կրթվել»:<sup>58</sup> Պարսկաստանում

50 NLMP 8, Nr. 2 (Hermannsburg, 15.5.1921), 3:

51 Նույնը:

52 Նույնը:

53 Նույնը:

54 Նույնը:

55 Այն «թշվառությունն» ու «մեծագույն կարիքը», որ Բախիմոնտներն տեսել են ինչպես Երևանում, այնպես էլ ողջ երկրում, նկարագրել է Ռյոբելենը առաքելության համայնքի «Մոլություններում»: Հաճախ իրենց առջև հայտնվող մարդիկ կիսասովյալ, կմախքի նման նիհարած էին ու միայն շորի կտորներով ծածկված: NLMP 8, Nr. 1 (Hermannsburg, 1.2.1921), 2:

56 Նույնը:

57 Նույնը:

58 Նույնը:

դպրոցների դասադուրը սակայն հուշում է, որ ենթադրյալ հաջողություններն ավելի խորը ազդեցություն չեն ունեցել:<sup>59</sup>

Բախիմոնտները այցելում էին նաև տեղի բոլշևիկ կառավարչին: Նա իրեն նույնպես (արտասահմանցի) «ճամփորդների հանդեպ բարյացակամ» էր դրսևորում և հոգ տանում նրանց ֆիզիկական բարեկեցության համար: Կառավարչի կողմից տրամադրված հացի կտրոնները հնարավորություն տվեցին «մեկ ֆունտ հացը 4 ռուբլով գնելու»,<sup>60</sup> որի համար նրանք ազատ շուկայում 400 ռուբլի պետք է վճարեին:

Լոկոմոտիվին 19 օր ապարդյուն սպասելուց հետո Բախիմոնտն իր անձնակազմի համար հինգ եզան կառք է վարձում, «որոնց վրա բոլոր արկղերն ու ճամպրուկները բեռնվում, և որոնց վրա նստելով, ճամփորդները դեպի ձյունածածկ երկիր են ճանապարհվում»:<sup>61</sup> Ճանապարհորդությունը վերածվում է արկածախնդրության:

«Գետերը հատելիս փոքր վթարներ են տեղի ունենում. մեկ կառք խրված մնաց ճահճի մեջ և մեկ ժամ պահանջվեց այն կրկին հանելու համար; տիկին Բախիմոնտը մի անգամ ինքն ընկավ սառը ջրի մեջ, բայց վնաս չկրեց դրանից: Ձնաբքի պատճառով ճանապարհորդները ստիպված մնում են մի գյուղում, որտեղ շատ հիվանդներ խորհուրդ և օգնություն էին խնդրում միսիոներներից»:<sup>62</sup>

Հունվարի 28-ի երեկոյան նրանք «ողջ ու առողջ և իրենց ամբողջական ուղեբեռով [հասան] Ջուլֆա»,<sup>63</sup> որտեղ նրանց թույլատրեցին առանց տուրքի հատել սահմանը: Պարսկական կողմում նրանց բարյացակամ ընդունելություն էր սպասում:

«Մաքսային կետի ղեկավար Միրզա Մեհեմեթ Ալի Խան դե Չեյբանին ոչ միայն անմիջապես թույլ տվեց ներմուծել իրերը, այլև երեք միսիոներներին իր տուն տարավ և նրանց ութ օր շարունակ առատորեն հյուրասիրեց, քանզի այնքան երկար տևեց այդ առատ հյուրասիրությունը, մինչև որ նրանք կարողացան շարունակել իրենց ճանապարհորդությունը»:<sup>64</sup>

Փետրվարի 6-ին նրանք մեկնեցին Թավրիզ և տեղ հասան փետրվարի 7-ին: Պարսկաստանում նույնպես աշխատանքը տեղաբնիկ հայ և սիրիացի քրիստոնյաների համագործակցության վրա էր հիմնված: Բախիմոնտները բավարար կերպով պատրաստված չէին քաղաքական իրավիճակին, չունեին անհրաժեշտ միջոցներ (օր.՝ դեղորայք կամ դրամ) և այդպես անօգնական կերպով

59 Stú Martin Tamcke, *Mission und Kulturkonflikt*, 433-446:

60 NLMP 8, Nr. 2 (Hermannsburg, 15.5.1921), 3:

61 Նույնը:

62 Նույնը:

63 NLMP 8, Nr. 2 (Hermannsburg, 15.5.1921), 3-4; Stú նաև կարճ հիշատակում՝ Schomerus Christoph, *Drei Jahrzehnte Hermannsburger Missionsgeschichte*, 96:

64 NLMP 8, Nr. 2 (Hermannsburg, 15.5.1921), 4:



ենթարկվում էին իրենց վրա հարձակումներին, ինչն ի վերջո արժեցավ նրան իր կյանքը, իսկ նրա կնոջը՝ ցկյանս հոգեկան տրավմա պատճառեց:

## Գրականություն

- Ohne Angabe des Verfassers, Bericht über die Hermannsburger Mission im Jahr 1922 [Սուանց հեղինակի սվյալների, Հերմանսբուրգի առաքելության մասին զեկույցը 1922 թ.], Hermannsburg 1923:
- Ohne Angabe des Verfassers, Georg Bachimont, ein Märtyrer für die Kurdenmission [Սուանց հեղինակի սվյալների, Գեորգ Բախիմոնտ, քրդական առաքելության մի մարտիրոս], Hermannsburger Bote 1921, 15. Dezember, 95–96:
- Brentjes, Burkard, Kurdish Tribes and the State in Iran: The Case of Simko's Revolt, in: R. Tapper, The Conflict of Tribe and State in Iran and Afghanistan, London 1983, 364–400:
- Chalabian, Antranig, General Andranik and the Armenian Revolutionary Movement, Southfield/Michigan 1988:
- Evangelisch-lutherischer Friedensbote aus Elsaß-Lothringen 51, Nr. 45, »Georg Bachimont †« (6. November 1921) [Ավետարանական-լուծերական խաղաղության սուրհանդակ էլզաս-Լոթարինգից 51, թիվ 45, «Գեորգ Բախիմոնտ †»), Straßburg 1921:
- Goltz, Hermann / Meissner, Axel, Deutschland, Armenien und die Türkei. Dokumente und Zeitschriften aus dem Dr. Johannes-Lepsius-Archiv an der Martin-Luther-Universität Halle-Wittenberg [Գերմանիան, Հայաստանն ու Թուրքիան: Փաստաթղթեր և ամսագրեր Հալլեի համալսարանի Դոկտ. Յոհաննես Լեփսիուսի արխիվից], Teil 1: Katalog; Teil 2: Mikrofiche-Edition, München 1998–2004:
- Groß, Andreas, Missionare und Kolonisten, Die Basler und die Hermannsburger Mission am Beispiel der Kolonie Katharinenfeld 1818–1870, Studien zur Orientalischen Kirchengeschichte 6 [Միսիոներներ և գաղութարարներ, Բազելի և Հերմանսբուրգի միսիոներությունը Ապթարինենֆելդի գաղութի օրինակով 1818–1870: Արևելյան Եկեղեցական Պատմության Ուսումնասիրություններ 6], Ham-burg 1998:
- Harms, Theodor (Ed.), Hermannsburger Missionsblatt 15 [Հերմանսբուրգյան առաքելության թերթ], Hermannsburg 1868:
- Ledderhose, Karl Friedrich, Leben und Wirken des Missionar Dr. Felician von Zarembo [Միսիոներ ղոկտ. Ֆելիչիան ֆոն Ջարեմբայի կյանքն ու գործունեությունը], Basel 1882:
- Lyko, Dieter, Gründung, Wachstum und Leben der evangelischen christlichen Kirchen im Iran, Oekumenische Studien 5 [Իրանում ավետարանական քրիստոնեական եկեղեցիների հիմնադրամը, աճը և կյանքը: Էկումենիկ ուսումնասիրություններ 5], Leiden 1964:
- Nachrichten aus der Lutherischen Mission in Persien (NLMP) [Լյուծերական առաքելության նորություններ Պարսկաստանում], in: Verein für Lutherische Mission in Persien (ed.), Hermannsburger Missionsblatt, Hermannsburg 1941–1953:
- Richter, Julius, Mission und Evangelisation im Orient [Սաքելությունն ու ավետարանի քարոզչությունն Արևելքում], Allgemeine Evangelische Missionsgeschichte III, 2. Aufl. Gütersloh 1930:
- Röbbelen, Karl, Lebensbild des ersten Missionars der deutschen luth. Kurdenmission in Persien [Պարսկաստանում գերմանա-լուծերական քրդական առաքելության առաջին միսիոների կենսագրությունը], Hermannsburger Missionskalender 21, Hermannsburg 1923:
- Röbbelen, Karl, Trauerkunde aus Persien [Մահազույծ Պարսկաստանում], Hermannsburger Missionsblatt 1921:
- Schomerus, Christoph, Drei Jahrzehnte Hermannsburger Missionsgeschichte 1890–1920 [Հերմանսբուրգի միսիոներական պատմության երեք տասնամյակ 1890–1920], Hermannsburg 1921:
- Tamcke, Martin, Bachimont, Georg Hippolyt [հանրագիտ. խորագիր. Բախիմոնտը, Գեորգ Հիպպոլիտ], in: Biographisch-Bibliographisches Kirchenlexikon (BBKL) 18, Nordhausen 2001, 118–120:
- Tamcke, Martin, Die Arbeit im Vorderen Orient [Մշատանքը Մերձավոր Արևելքում], in: Ernst-August Luedemann (ed.), Vision: Gemeinde weltweit, 150 Jahre Hermannsburger Mission und Ev.-luth. Missionswerk in Niedersachsen [Տեսիլք. Եկեղեցի աշխարհով մեկ, Հերմանսբուրգի առաքելության 150 տարի և Ավետար.-Լուծ. միսիոներական աշխատանք ներքին Սաքսոնիայում], Hermannsburg 2000:
- Tamcke, Martin, Die Archivalien der deutschen Kurdenmissionen als Quellen zur Geschichte Kurdistans

- am Beispiel des Missionars Bachimont (1878–1921) [Գերմանական քրդական առաքելությունների արխիվները որպես Քրդստանի պատմության աղբյուրներ միսիոներ Բախիմոնտի օրինակով (1878–1921)], in: Tamcke Martin (ed.), Koexistenz und Konfrontation, Beiträge zur jüngeren Geschichte und Gegenwartslage der orientalischen Christen, Studien zur Orientalischen Kirchengeschichte 28 [Համակեցություն և առճակատում, ավանդներ արևելյան քրիստոնյաների նորագույն պատմությանն ու ներկայիս իրավիճակին: Ուսումնասիրություններ արևելյան եկեղեցու պատմության մեջ 28], Hamburg 2003, 417–426:
- Tamcke, Martin, Die deutschen Kurdenmissionen in Mahabad in ihrem Kontakt zu den orientalischen Christen [Գերմանական քրդական առաքելությունները Մահաբադում՝ արևելյան քրիստոնյաների հետ իրենց շփման մեջ], in: Heleen Murre-van den Berg (ed.), New Faith in Ancient Lands, Western Missions in the Middle East in the Nineteenth and Early Twentieth Centuries, Leiden/Boston 2006, 175–190:
- Tamcke, Martin, Deutsche Missionare unter kurdischen Muslimen, Erfahrungen aus der Geschichte der deutschen lutherischen Mission in Sautschbulagh/Mahabad [Գերմանացի միսիոներները բուրդ մուսուլմանների շրջանում. Փորձառություններ գերմանական լյութերական առաքելության պատմությունից Սալջբալազ/Մահաբադում], in: Beltz Walter/Tubach Jürgen (ed.), Regionale Systeme koexistierender Religionsgemeinschaften, Halle Beiträge zur Orientwissenschaft 34 [Համագոյակցող կրոնական համայնքների տարածաշրջանային համակարգեր, Հալլեի ներդրումները արևելագիտության մեջ h. 34], Halle (Saale) 2002, 307–322:
- Tamcke, Martin, Leben im Zwiespalt. Anmerkungen zu Armin T. Wegners Armenien-Reise 1927 [Ապրել տարածաշրջանի մեջ: Արմին Տ. Վեգների Հայաստան կատարած այցի մասին նշումներ 1927 թ.], in: Drost-Abgarjan Armenuhi/Goltz Hermann (ed.), Armenologie in Deutschland, Beiträge zum Ersten Deutschen Armenologen-Tag, Studien zur Orientalischen Kirchengeschichte 35 [Հայագիտությունը Գերմանիայում, գեկույցներ նվիրված գերմանացի հայագետների առաջին օրվան: Ուսումնասիրություններ արևելյան եկեղեցու պատմության վերաբերյալ h. 35], Münster 2005:
- Tamcke, Martin, Les documents d'archives de la mission allemande au Kurdistan considérés comme sources d'informations sur l'histoire du Kurdistan: A – Le cas particulier du missionnaire Bachimont (1878–1921), B – L'affaire Mirza Aziz Madjid: Le Kurde dénommé »l'étranger venu de Perse« [Քրդստանում գերմանական առաքելության արխիվային փաստաթղթերը համարվում են Քրդստանի պատմության վերաբերյալ տեղեկատվության աղբյուրներ. Քուրդը կոչվում է «Պարսկաստանից եկած օտարականը»], in: études kurdes 5, Paris 2003:
- Tamcke, Martin, Mission und Kulturkonflikt: Deutsche Missionen im Iran des 19. Jahrhunderts [Առաքելություն և մշակութային հակամարտություն. Գերմանական միսիոներական առաքելությունները 19-րդ դ. Իրանում], in: Gall Lothar/Willoweit Diertmar (ed.), Judaism, Christianity, and Islam in the Course of History: Exchange and Conflicts, Schriften des Historischen Kollegs, Kolloquien 82 [Հուդայականությունը, քրիստոնեությունը և իսլամը պատմության ընթացքում. Փոխանակում և Կոնֆլիկտներ, պատմական կոլեկցիոն մի գրվածքներ], München 2011, 433–446:
- Tamcke, Martin, Zwischen kurdischem Nationalismus, iranischer Zentralgewalt und amerikanischer Misionskonkurrenz. Die Hermannsbürger Mission in Mahabad nach dem Ersten Weltkrieg [Քրդական ազգայնականության, Իրանի կենտրոնական իշխանության և ամերիկյան միսիոներական մրցակցության արանքում. Հերմանսբուրգի առաքելությունը Մահաբադում Առաջին համաշխարհային պատերազմից հետո], in: van der Heyden Ulrich/Stoeker Holger (ed.), Mission und Macht im Wandel politischer Orientierung, Europäische Missionsgesellschaften in politischen Spannungsfeldern in Afrika und Asien zwischen 1800 und 1945, Missionsgeschichtliches Archiv, Studien der Berliner Gesellschaft für Missionsgeschichte 10 [Առաքելություն և ուժը փոխելու քաղաքական կողմնորոշումները, Եվրոպական առաքելության հասարակությունները քաղաքական լարվածության մեջ Աֆրիկայում և Ասիայում 1800–1945 թթ. Առաքելության պատմության արխիվ, ուսումնասիրություններ Առաքելության պատմության Բեռլինի ընկերության կողմից 10], Wiesbaden 2005, 595–604:
- Zaremba, Felician Martin von, Ein russischer Edelmann als Missionar: aus dem Leben [Մի ռուս ազնվական որպես միսիոներ. կյանքից], Basel 1890:

## Հեղինակ

### **Մարտին Թամբե, ածբն. գիտ. դոկտ., բազմակի պատվո դոկտ., պրոֆ.**

Արևելյան եկեղեցիների պատմություն մասնագիտացում, դասավանդում՝ 1980–1989 Գյոթինգեն, 1988–1989 Հերմանսբուրգ և 1999-ից Գյոթինգենի Գեորգ-Աուգուստի համալսարանում, բազմաթիվ ազգային և միջազգային գիտական միությունների նախագահ, [martin.tamcke@theologie.uni-goettingen.de](mailto:martin.tamcke@theologie.uni-goettingen.de)

**Թարգմանությունը՝** Արտակ Ավետիս Սահակյանի

---

## Open Access

This paper is published under the Creative Commons Attribution–ShareAlike 4.0 International license ([CC BY-SA 4.0](https://creativecommons.org/licenses/by-sa/4.0/)). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.